ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» փետրվարի 2018 թվականի N 44-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Արեգ Ավետիսյանի և Միքայել Ջանփոլադյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Արեգ Ավետիսյանին և Միքայել Ջանփոլադյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 2-րդ թաղամասի թիվ 1/10 հասցեից բաժանված 231,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 1/10, 265,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 1/10/1, 209,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 1/10/2:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» փետրվարի 2018 թվականի N 45-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արգամ Վահագի Գևորգյանի (ծնված՝ 1974 թվականի փետրվարի 9-ին) լիազոր ներկայացուցիչ Արմեն Վահագի Գևորգյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Արգամ Վահագի Գևորգյանին պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 11-րդ նրբանցքի թիվ 1 հասցեի տնամերձ հողամասում (հիմք՝ ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2017 թվականի հուլիսի 25-ին, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 4-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները, ինքնակամ փակված մեկ դուռը, ինքնակամ բացված երեք պատուհանները և մեկ դուռը:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արգամ Վահագի Գևորգյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 11-րդ նրբանցքի թիվ 1 հասցեի տնամերձ հողամասում 1980-2005 թվականներին իրականացրել է շինարարական աշխատանքներ և ինքնակամ կառուցել բնակելի տուն՝ 52,3 քառ.մետր, թիվ 2 և 7 ինքնակամ շինություններ՝ 54,3 քառ.մետր, թիվ 3, 4, 5, 6 ինքնակամ շինություններ՝ 85,85 քառ.մետր, ինքնակամ պարիսպ՝ 14,75 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինքնակամ փակել մեկ դուռ և ինքնակամ բացել երեք պատուհաններ և մեկ դուռ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13, 18, 22.1 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արգամ Վահագի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 11-րդ նրբանցքի թիվ 1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների և ինքնակամ փակված մեկ դռան, ինքնակամ բացված երեք պատուհանների և մեկ դռան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Արգամ Վահագի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 11-րդ նրբանցքի թիվ 1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները, ինքնակամ փակված մեկ դուռը, ինքնակամ բացված երեք պատուհանները և մեկ դուռը համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 146 926 (մեկ հարյուր քառասունվեց հազար ինը հարյուր քսանվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 12
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» փետրվարի 2018 թվականի N 46-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Վիգեն Արնոյի Տատինցյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 12-րդ փողոցի թիվ 10 տնամերձ հողակտորում ինքնակամ իրականացրել է շինարարական աշխատանքներ և կառուցել բնակելի տուն և շինություն, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Վիգեն Արնոյի Տատինցյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Վիգեն Արնոյի Տատինցյանին՝ օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105214101 հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» փետրվարի 2018 թվականի N 47-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Վիգեն Արնոյի Տատինցյանի (ծնված՝ 1970 թվականի դեկտեմբերի 5-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 12-րդ փողոցի թիվ 10 հասցեի տնամերձ հողամասում (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման N 2821663 վկայականը, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2011 թվականի օգոստոսի 4-ին, և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի փետրվարի 12-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Վիգեն Արնոյի Տատինցյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 12-րդ փողոցի թիվ 10 հասցեի տնամերձ հողամասում 2017 թվականին ինքնակամ կառուցել է բնակելի տուն՝ 290,36 քառ.մետր, շինություն՝ 3,3 քառ.մետր և պարիսպ՝ 8,1 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Վիգեն Արնոյի Տատինցյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 12-րդ փողոցի թիվ 10 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Վիգեն Արնոյի Տատինցյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 12-րդ փողոցի թիվ 10 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105214218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 255 593 (երկու հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր իննսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 13
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» փետրվարի 2018 թվականի N 48-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 35-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով և հիմք ընդունելով «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի փետրվարի 12-ին տրված եզրակացությունը, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 31-ի «Ջրվեժի 5-րդ փողոցի թիվ 27 հասցեում գտնվող բնակելի տան մի հատվածի գործառական նշանակությունը հասարակական՝ բժշկական սպասարկման շենք սահմանելու մասին» թիվ 35-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման նախաբանից հանել «և թիվ 10» բառերը,
2) որոշման նախաբանում և 1-ին կետում «55,67» թիվը փոխարինել «55,77» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 13
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» փետրվարի 2018 թվականի N 49-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Էլյա Արտեմի Շահգելդովայի (ծնված՝ 1949 թվականի հունիսի 9-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 07-057-0338-0016 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորում (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման N 2738545 վկայականը, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2010 թվականի դեկտեմբերի 21-ին և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի փետրվարի 8-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Էլյա Արտեմի Շահգելդովան սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 07-057-0338-0016 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորում 2003 թվականին ինքնակամ կառուցել է մառան՝ 20,02 քառ.մետր և բաց պատշգամբ՝ 8,12 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Էլյա Արտեմի Շահգելդովային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 07-057-0338-0016 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների՝ մառանի և բաց պատշգամբի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Էլյա Արտեմի Շահգելդովային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 07-057-0338-0016 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 43 899 (քառասուներեք հազար ութ հարյուր իննսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Մուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» փետրվարի 2018 թվականի N 50-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 49-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 14-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին» թիվ 49-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման նախաբանի երրորդ պարբերությունում «10, 11, 13-րդ կետերի» բառերը փոխարինել «19-րդ, 21-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի N 498 որոշման 2-րդ կետի բ) ենթակետի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 16
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» փետրվարի 2018 թվականի N 51-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել «Բարև Արև» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Լուսինե Համբարձումի Սարգսյան, տեղադրելու արտաքին գովազդ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 22-րդ նրբանցքի թիվ 4 հասցեում գտնվող շինության վրա:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունը հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 16
գ. Ջրվեժ